ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2012Թ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- Օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպվել է 2012թ. մայիսի 6-ին կայացած ՀՀ Ազգային ժողովի և կազմակերպվում է 2013թ. փետրվարի 18-ին կայանալիք ՀՀ նախագահի ընտրությունների նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքները.
- Պատշաճ կերպով կազմվել է նախազինակոչային հասակի պատանիների փաստաթղթերը, պատանիները ներկայացվել են էջմիածնի զինվորական կոմիսարիատ՝ բժշկական հետազոտման, աջակցություն է ցուցաբերվել գարնանային, աշնանային զորակոչին, ճիշտ ժամանակին ապահովվել է զինապարտների մասնակցությունը կազմակերպված զորավարժանքներին.
- Մերձավան համայնքի 2012թ. ֆոնդային բյուջեն կազմում է 50 386 800դրամ, ծախսային մասը կազմել է 30 235 140դրամ.
- Ձեռք է բերվել գյուղապետարանի և մանկապարտեզի հանդիսությունների սրահի համար գույք՝ 1 605 000դրամ արժողությամբ.
- Գյուղապետարանի աշխատողների համար ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա՝ 478 300 արժողությամբ.
- «Հայաստան համահայկական» հիմնադրամին է փոխանցվել 50 000դրամ.
- «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ, որպես ֆինանսական աջակցություն, տրամադրվել է 800 000դրամ.
- Համայնքի սոցիալապես անապահով 53 ընտանիքների տրամադրվել է 3 160 000 դրամ դրամական օգնություն.
- Գյուղապետարանը ամանորի, մայրության և գեղեցկության տոների կապակցությամբ գյուղապետարանի, փոստի, մանկապարտեզի, մշակույթի տան աշխատակիցների նվերների գնման համար ծախսել է 550 000դրամ.
- Մանկապարտեզի աշխատանքները կոորդինացնելու, ժամանակին ու անթերի կազմակերպելու համար 2012թ երկրորդ կիսամյակում տրամադրվել է, որպես սուբսիդիա՝13 730 300դրամ /ուղղվել է աշխատավարձի, կոմունալ ծառայությունների, սննդի , նորոգումների և սարքավորումների ձեռք բերմանը/.
- Մանկապարտեզի համար գնվել է խոհանոցային սեղան և սեղան-լվացարան ընդամենը՝ 487 200դրամ արժողությամբ, մանկական երկտեղանոց մահճակալներ 12 հատ՝ 960 000դրամ արժողությամբ, խաղասենյակները ձևափոխվել և դարձվել է ննջասենյակներ՝ծախսվել է 4 227 100 դրամ.
- Գյուղապետարանը Մերձավանի մանկապարտեզին նվիրել է 150 000դրամ արժողությամբ երաժշտական սարքավորումներ, սառնարան՝ 200 000դրամ արժողությամբ.
- Միջնակարգ դպրոցի համար գնվել է դռներ և պատուհաններ՝ 9 980 000 դրամ արժողությամբ, անցկացվել է դպրոցի լոկալ ջեռուցման համակարգ՝12 126 175 դրամ արժողությամբ, գնվել է բազալտե սալիկներ՝ դպրոցի պատուհանագոգեր տեղադրելու համար և վճարվել է 330 000 դրամ գումար.
- Հայաստանի համայնքների միության կողմից կազմակերպված «Գյուղական համայնքների տնտեսական զարգացում» ծրագրի շրջանակներում Գերմանիայի Բավարիա երկրամասի համայնքներում, ճանաչողական այցի նպատակներով , համայնքի ղեկավարի գործուղման համար ծախսվել է 1 000 000դրամ գումար.
- Թերթերի և ամսագրերի բաժանորդագրման համար ծախսվել է 367 200հազար դրամ.

- Համակարգչային ծառայությունների մատուցման համար ծախսվել է 160 000 դրամ.
- Գյուղապետարանի էլեկտրոնային ստորագրության հաստատման համար ծախսվել է 30 000 դրամ.
- 2012թ. գյուղապետարանը բնակիչներից ստացել է 92 դիմումներ, որոնք քննարկվել են և ժամանակին տրվել են պատասխաններ: Գյուղապետարանը բնակիչներին տվել է 926 տեղեկանք, ստացվել է 203 պաշտոնական նամակներ, բոլորն էլ ժամանակին քննարկվել են և ուղարկել է 230 պաշտոնական նամակներ, գումարվել է ավագանու 14 նիստեր, արձակվել է համայնքի ղեկավարի 16 կարգադրություններ և 45 որոշումներ, կատարվել երեք աճուրդ վաճառք՝ բնակավայրի այլ նշանակության հողակտորների և մեկ հողակտորի ուղղակի վաճառք.
- Ժամանակին կատարվում է երեխաների բժշկական պրոֆիլակտիկ պատվաստումները, հաշմանդամության կարգ ունեցող բնակիչները և 0-7 տարեկան հիվանդ երեխաները ստանում են իրենց անհրաժեշտ, անվճար դեղորայքը.
- Մերձավան համայնքի ֆուտբոլային թիմը մշտապես մասնակցում է հանրապետական, մարզային առաջնություններին, ֆուտբոլի փնջային մրցաշարերին և բազմիցս արժանացել է պատվոգրերի: Հայաստանի հանրապետական 2012-2013թթ առաջնությունում, Մերձավան համայնքի Մ.Պ 15Բ ֆուտբոլային թիմը՝ 05.12.2012թ-ի դրությամբ գրավել է առաջին տեղը: Բոլոր միջոցառումների կազմակերպմանը և մասնակիցների տեղափոխմանը աճակցել է գյուղապետարանը.
- Համայնքում գործում է ,,Արեգակ,, վարկավորման ծրագիրը, մասնակիցների թիվը շարունակական ավելանում է, որը համայնքի կին բնակիչներին հնարավորություն է տալիս զարգացնելու իրենց բիզնեսը.
- Քաղաքացիների , ինչպես նաև «Երկրագործության և բույսերի պահպանման» գիտական կենտրոն ՊՈԱԿ աշխատակիցների, դիմումների հիման վրա դարձյալ կատարվել է համայնքի բնակիչների և այգեգործական ընկերության անդամների հողակտորների չափագրման և սահմանների ճշտման աշխատանքներ.
- Շաբաթական երեք անգամ համայնքի ողջ տարածքում կատարվում է աղբահանման աշխատանքներ.
- Հաճախակի փոխվում է փողոցների գիշերային լուսավորության վառված լամպերը 2012թ. ծախսվել է 200 000դրամ.
- Երկրորդ կիսամյակում՝ Մերձավան համայնքի խմելու ջրի «Օրվա կարգավորման ջրամբարում» փոխվել է փականային հանգույցները, փոխվել է Սևանի և առաջին փողոցում 150 գծամետր երկարությամբ ջրագիծ, ծախսվել է 180 000դրամ.
- Համայնքի կոյուղին շատ հին է և հաճախակի նորոգման կարիք է ունենում՝ 2012 թվականի երկրորդ կիսամյակում շուրջ 550 գծամետր կոյուղու խողովակաշար է մաքրվել՝ ծախսվել է 550 000դրամ.
- Գյուղապետարանը, ժամանակին կազմել և ներկայացրել է բոլոր հաշվետվությունները ըստ պատկանելիության.
- Մանկապարտեզի հանդիսությունների սրահի և գյուղապետարանի որոշ սենյակների համար գնվել է 560 000դրամ արժողությամբ շերտավարագույրներ.
- Գյուղապետարանը 920 000դրամ՝ որպես սոցիալական օգնություն տրամադրել է Մերձավանի միջնակարգ դպրոցի առաջին դասարանի ուսուցչի աշխատավարձի և պարտադիր սոց վճարի համար.
- Գյուղապետարանի վարչական շենքում անցկացվել է լոկալ ջեռուցման համակարգ, ծախսվել է 3 500 000դրամ.
- Գյուղապետարանի վարչական շենքի ընթացիկ վերանորոգման, բակի բարեկարգման համար ծախսվել է 735000դրամ.

- Կատարվել է փողոցների մասնակի ասֆալտապատման (փոսալցման) աշխատանքներ՝ 400 000դրամ արժողությամբ.
- Նորակառույց 2-րդ փողոցից գազի նոր խողովակաշար է անցկացվել դեպի 3-4րդ փողոցների սկիզբը՝ 260 գծամետր երկարությամբ և ծախսվել է 1 200 000դրամ գումար.
- Գարնանը կազմակերպվել է շաբաթօրյակ՝ բնակչության ուժերով, մաքրվել է 300 գծամետր հողային հունով ոռոգման ջրի առուներ.
- Մանկապարտեզի սաների , դպրոցականների, համայնքի մշակույթի տան «Փայլող աստղեր» պարային ինքնագործ խմբի սաների կազմակերպած հանդեսները, համերգները, նկարահանումները հովանավորել է համայնքի ղեկավարը, գնվել է 150.0 հազար դրամ արժողությամբ պարային զգեստներ.
- Գյուղապետարանը մշտապես աջակցում է բնակչության էլեկտրամատակարարման, խմելու ջրի սպասարկման, ոռոգման ջրի մատակարարման, գազամատակարարման, կոյուղու սպասարկման ծառայություններ իրականացնող աշխատակիցներին.

2013թ-ին համայնքի հիմնախնդիրներն են՝

1.Մշակույթի տան տարածքի ցանկապատում.
2.Մշակույթի տան առաջին հարկի մասնակի վերանորոգում:
3.Համայնքի մանկապարտեզի մասնակի նորոգում.
4.Գյուղապետարանի տանիքի նորոգում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ